

**ԹՈՄԱՍ ԶԵՖԵՐՍՈՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՋԱԿԻ ԵՎ ԱՂԵՏԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ
2019-2020**

Թումաս Զեֆերսոն դպրոցի Արտակարգ իրավիճակի և աղետի նախապատրաստության ծրագրի նպատակն է արտակարգ որևէ դեպքում պաշտպանել աշակերտներին ու դպրոցի աշխատողներին: Այս ծրագրի համաձայն ընտրվում են արտակարգ իրավիճակի հանձնախմբեր և ընդգծվում են հիշյալ հանձնախմբերի յուրաքանչյուր անդամի պատասխանատվությունը: Այս ծրագիրը քարտեզագրում և վերանայվում է ամեն տարի: Բոլոր աշակերտները և անձնակազմի անդամները ամեն ամիս մասնակցում են հատուկ վարժողությունների, որոնց ընթացքում ըստ կարիքի կիրառվում ու վերանայվում են ընթացակարգերը: Ուսումնական խորհրդի ֆաղափականության և վարչական կանոնադրության համաձայն Զեֆերսոն տարրական դպրոցում հաստատվել են **Աշակերտին ազատ արձակելու հետևյալ ընթացակարգերը:**

Արտակարգ իրավիճակում, ամեն ջանք կգործադրվի ընտանիքներին ժամանակին տեղեկացնել նրանց երեխաների անվտանգության ու ապահով իրավիճակի մասին: Բոլոր ծնողները/խնամակալները պետք է հետևեն հետևյալ ընթացակարգերին՝

- ✓ ՄԻ՝ ԶԱՆԳԱՋԱՐԵՔ ԴՊՐՈՑԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ:
- ✓ Միացրե՛ք ռադիոկայանի կՐԼԱ (ԱՄ 870) ալիքը՝ արտակարգ իրավիճակի տեղեկությունները ստանալու համար:
- ✓ **Հետևե՛ք աշակերտին ազատ արձակելու ընթացակարգերին: Ծնողները Ձե՛ն կԱՐՈՂ դպրոց մտնել մինչև չտրվի հրամանատարության կենտրոնի թույլտվություն:**

Հիմնական ընթացակարգեր արտակարգ միջադեպից հետո

1. Արտակարգ իրավիճակում երբ ապահով լինի շենքից դուրս գալ, աշակերտները և անձնակազմը դուրս կգան շենքից և կֆայլեն դեպի խաղահրապարակ:
2. Ուսուցիչները, կորած կամ վնասված աշակերտների դեպքերը կգեկուցեն հրամանատարության կենտրոնին:
3. Արտակարգ իրավիճակի հանձնախմբի անդամները կներկայանան նախորոշված կայաններում:
4. Դպրոցի բոլոր անձնակազմը կմնա աշակերտների մոտ մինչև բոլոր աշակերտները հանձնվեն իրենց ընտանիքներին:

ԱՇԱԿԵՐՏԻՆ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Արտակարգ իրավիճակում, բոլոր աշակերտները ազատ կարձակվեն **Թւստին փողոցի դարբասից:** Ծնողները կտեղեկացվեն, եթե անհրաժեշտ լինի փոխելու արձակման դարբասի վայրը:

- ✓ Աշակերտները, դասընկերներին հետ միասին կմնան իրենց դասարանին հանձնարարված վայրում:
- ✓ Ծնողը/խնամակալը, իր երեխային դպրոցից վերցնելու համար կգնա Թւստին փողոցի դարբասի մոտ, և իր **ինձնության ֆարսը** ցույց տալով կխնդրի իր երեխային: Աշակերտը կհանձնվի այն չափահասին միայն, որի անունը գրված է երեխայի արտակարգ իրավիճակի ֆարսի մեջ: Շատ կարևոր է, որ թարմացնե՛ք ձեր երեխայի արտակարգ իրավիճակի ֆարսի տեղեկությունները: Ծնողը/խնամակալը դպրոցին պիտի անմիջապես տեղեկացնի, եթե փոխվում է տան հասցեն կամ հետախոսահամարները:
- ✓ Աշակերտին ծնողին հանձնելու հանձնախմբի անդամները լրացնում են աշակերտին հանձնելու ֆարսի տեղեկությունները (անուն, դասարան, ուսուցիչ, երեխային վերցնող չափահասի անուն) ծնողի տրամադրած տեղեկությունների համաձայն:
- ✓ Սուրհանդակ աշակերտները տանում են ֆարսերը ու տալիս են Աշակերտին վերահսկող հանձնախմբի ղեկավարներին ու անձնակազմի անդամներին:
- ✓ Գտնում են աշակերտին և ուղարկում են իր ընտանիքին հանձնելու Թւստին փողոցի դարբասի մոտ: Աշակերտի վզից կախվում է ծնողին հանձնելու ֆարսը (Րըֆուստ Չարդ):
- ✓ Աշակերտին՝ իր ընտանիքին հանձնելու համար, հանձնախմբի անդամները ստուգում են ֆարսի տեղեկությունները: Աշակերտի վզից հանվում է կախված ֆարսը և չափահասից խնդրվում է ստորագրել տետրակը:
- ✓ Աշակերտը հանձնվում է իր ընտանիքի չափահաս անդամին:
- ✓ Ծնողները Ձե՛ն կԱՐՈՂ դպրոց մտնել մինչև չթույլատրվի հրամանատարության կենտրոնի կողմից:

Արտակարգ իրավիճակում դպրոցից դուրս էվակուացիա

Գլենդելի ոստիկանության ու հրշեջ կայանի կարգադրությամբ, երկուսից երեք վայր է նշանակված աշակերտներին ու անձնակազմին տեղափոխել, եթե արտակարգ իրավիճակում անհրաժեշտ լինի աշակերտներին ամբողջապես դուրս հանել դպրոցից: Արտակարգ իրավիճակի բնույթից ելնելով, հավանաբար մեզ հրահանգվի գնալ Հուվեր ավազ դպրոցը կամ ավելի հեռու մինչև Բրանդ գրոսայգին: Ծնողները, հրատապ հետախոսագնացերով կտեղեկացվեն էվակուացիայի կայանի մասին: Աշակերտին ազատ արձակելու ընթացակարգերը կկիրառվեն էվակուացիայի կայաններում: